



## IRM

### Տեղեկատվական ձև

#### Ինչ է IRM-ն

IRM նշանակում է բժշկական արտապատկերում մագնիսական ռեզոնանսի միջոցով: Դա ռադիոլոգիական տեխնիկա է, որը թույլ է տալիս մարդու մարմնի շատ ճշգրիտ պատկերում: Այն չի օգտագործում ռենտգենյան ճառագայթներ: IRM-ն հիմնված է ջրի մոլեկուլի մագնիսական հատկությունների վրա: Մեքենան օգտագործում է ինտենսիվ մագնիսական դաշտ՝ ստեղծված էլեկտրոմագնիսի կողմից:

#### IRM-ի շահավետությունը

Սա ժամանակակից տեխնիկա է՝ շատ օգտակար հոդերի, ուղեղի և ողնուղեղի ուսումնասիրության համար: Հաճախ օգտագործվում է նաև այլ օրգանների (լյարդ, երիկամներ) հետազոտման համար և նաև զարկերակները գննելու համար: IRM-ն անցավ է, առանց հետագա ազդեցության, սակայն կան հակացուցումներ կապված ուժեղ մագնիսական դաշտի հետ.

- ռիթմակառավարիչ
- որոշ սրտի կապաններ
- մետաղական օտար մարմիններ, որոնք գտնվում են ուղեղի կամ աչքերի մո

#### Զննման ընթացքը

Ժամանելուն պես Ձեզ խնդրում են թողնել կաբինետում Ձեր բոլոր մետաղական իրերը և հագուստները ըստ բժշկի ցուցման: Հետո Ձեզ կուղեկցեն ստուգման սենյակ: Դուք կպառկեք մահճակալին՝ շատ հաճախ հետևի վրա: Մահճակալը կանցնի օղակի միջով: Ձեզ միայնակ կթողնեն սենյակում, մենք Ձեզ հետ կհաղորդակցվենք բարձրախոսի օգնությամբ: Մինչդեռ գնումը շարունակվի, մեր թիմը կդիտի Ձեզ և կտեսնի Ձեզ պատուհանի ետևից: Զննումը անցավ է և շատ հաճախ շատ աղմկոտ: Երբեմն անհրաժեշտ կլինի սրսկում կատարել զննման ընթացքում, շատ հաճախ թևին:

#### Ինչ բարդություն կարող է առաջանալ

Յուրաքանչյուր միջամտություն մարդկային մարմնի վրա, նույնիսկ եթե այն կատարվում է հմուտ անձնակազմի կողմից, որոնք դիմում են մաքսիմալ նախազգուշական միջոցների, պարունակում է բարդության ռիսկ:

- Սրսկումը կարող է առաջ բերել տհաճ, սակայն ոչ լուրջ կապտուկ, որը կանհայտանա մի քանի օրից,
- Սրսկման ընթացքում նյութի հոսք կարող է նկատվել մաշկի տակ: Սա հազվադեպ է նկատվում և բուժվում է տեղային կերպով,
- IRM-ում օգտագործված նյութի նկատմամբ Վերգիայի կամ նյութը չընդունելու ռեակցիաները բացառիկ են: